

ՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Կենսագրական ակնարկ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻԻ)

Օրհորդներ, տիկիներ եւ պարոններ,

Դէմքը՝ զոր այսօր պիտի ներկայացնեմ ձեզի՝ այն գրողներու շարքէն չէ որոնց վրայ խօսելու համար ստիպուած ըլլաւ մէկ քանի տասնեակ տարիներու գրական գործունէութիւն քրքրել: Նոր մըն է, եւ եթէ կ'ուզեք, նորագոյն մըն է այդ բանաստեղծը, որուն քնարը դեռ հազիւ թէ տասնեակ մը տարի թրթռացեր է: Եւ սակայն իր երգերը այնքան գրաւիչ են եղեր եւ իր քնարը այնքան բազմալար՝ որ երբ կանգ կ'առնենք այդ տաաը տարիներուն առջեւ, կը գտնենք որ բանաստեղծը արդէն իսկ պատկառելի եւ բեղուն գործ մըն է թողուցեր իր ետին:

Բայց անցնելէ առաջ իր դիմագծութեան, թոյլ տուէք երկու խօսք ընել այս Գրական ասուլիսներու մասին, զորս ոմանք՝ վստահաբար բարեմտօրէն՝ կ'ուզեն նկատել հաւաքոյթներ, ուր գրողներ կը հաւաքուին առաւելապէս զիրար գովելու համար: Այո՛, տիկիներ եւ պարոններ, հաւաքոյթներ են ասոնք, ուր գրողներ եւ մտաւորականներ կը խմբուին դրուատելու համար առ այժմ թրքահայ գրականութեան լաւագոյն գործերը, եւ նաեւ, ինչո՞ւ չէ, խանդավառութիւն ստեղծելու համար անոնց հեղինակներուն շուրջ: Մեր մտաւորականները ցարդ այնքան արհամարհոտ վերաբերում ունեցած են իրարու հանդէպ, որ քիչ մը իրաւ թէ տարօրինակ կը թուի երբ գրողներ իրարմով կը խանդավառուին: Ճիշտ է որ մեր մէջ պակսած է արդար քննադատութիւնն ու ճշմարիտ գնահատումը, ճիշտ է որ կամ բուռն պարսաւներու եւ կամ ջերմ գովեստներու միայն հանդիսատես եղած ենք, բայց ալ ատեն է որ գիտնանք ոչ միայն մեր գովեստները զսպել այնքան անտաղանդներու հասցէին, այլ նաեւ արժեցնել գիտնանք իսկական տաղանդը: Պզտիկ օրինակ մը յիշելով հարիւրաւորներու